*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*20 օգոստոսի 2005 թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2005 թվականի N 1232-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1922-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի,

բ) անտառի ազգային ծրագրի միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի,

գ) անտառի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

2005 թ. օգոստոսի 13
Երևան

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2005 թվականի**
**հուլիսի 21-ի N 1232-Ն որոշման**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի բաղադրիչների պահպանությունն օրախնդիր հարց է բնական պաշարների շարունակական դեգրադացման, կենսաբազմազանության կորստի և անապատացման համընդհանուր երևույթների կանխարգելման տեսակետից:

Որպես բնական ժառանգության կարևորագույն բաղադրիչ՝ բնական պաշարների թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անտառները, որոնք ունեն բնապահպանական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև ազգային անվտանգությունն ապահովող բացառիկ ռազմավարական նշանակություն: Սակայն բնական գործոնների բացասական ազդեցության և գերշահագործման արդյունքում անտառային էկոհամակարգերը ներկայումս խիստ վտանգված են:

Հայաստանի Հանրապետության անտառային պետական ֆոնդը 1993 թվականի հաշվառման արդյունքներով կազմում է երկրի տարածքի 11.2 % - ը՝ մոտ 460 հազ. հա, որից 334,1 հազ. հա

անտառածածկ տարածքներն են, այդ թվում՝ մոտ 50 հազ. հա արհեստական անտառները (այս տվյալները չեն ընդգրկում հետագա տարիներին անտառային ֆոնդում տեղի ունեցած փոփոխությունները):

Հայաստանի Հանրապետության անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և հարուստ կենսաբազմազանություն:

Ըստ նշանակության՝ Հայաստանի անտառները դասակարգվում են՝

ա) պաշտպանական նշանակության անտառների (257 հազ. հա),

բ) սոցիալական նշանակության անտառների (106 հազ. հա),

գ) հատուկ նշանակության անտառների (96 հազ. հա)

Ներկայումս հանրապետության բնական անտառների մոտ 70%-ը կազմալուծված ու ծերացած է, համեմատաբար դժվարամատչելի հասուն և գերհասուն անտառներում կենտրոնացած են փայտանյութի զգալի պաշարներ, որոնք ռելիեֆի կտրտվածության և դժվար հասանելիության պատճառով զերծ են մնում անտառօգտագործման շատ տեսակներից:

Անկանոն անտառահատումները և անտառպաշտպանական միջոցառումների բացակայությունը հանգեցրել են անտառներում կլիմայական պայմանների փոփոխությանը, ինչպես նաև հրդեհավտանգության բարձրացմանը (բարձր ջերմաստիճան, առատ լույս, հատումների հետևանքով թափված ճյուղեր և տերևներ):

Դրանք նպաստավոր պայմաններ են ստեղծել վնասատու միջատների և հիվանդությունների զանգվածային բազմացման, ինչպես նաև ծառուտների չորացման և հրդեհավտանգ պայմանների առաջացման համար:

Հայաստանի անտառային պաշարների դեգրադացիայի գործոններից են նաև վնասատուներն ու հիվանդությունները, գերարածեցումը, հողմերն ու երաշտը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջնահերթ խնդիր է անտառվերականգնման աշխատանքների իրականացումը, մասնավորապես, համատարած և մասնակի հատված անտառտարածքները վերականգնելու, ինչպես նաև անտառապատման աշխատանքները խթանելու համար՝ օպտիմալացնելով հանրապետության անտառպատվածության ներկա ցածր մակարդակը:

Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրն էապես կնպաստի անտառների կայուն կառավարմանը՝ պահպանությանը, պաշտպանությանը, օգտագործմանը, ինչպես նաև անտառների տնտեսական, սոցիալական և բնապահպանական դերի բարձրացմանը:

## II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրի հիմնական նպատակն է՝ անտառային էկոհամակարգերի պահպանությունը, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնումը, անտառային պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործումը և անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը:

2. Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրի խնդիրներն են՝

ա) ծրագրել և իրականացնել Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականությանն ու ռազմավարությանը համապատասխան անտառների և անտառային տարածքների կայուն կառավարմանը նպատակաուղղված գործողություններ,

բ) նպաստել պետական, համայնքային և սեփականության այլ ձևերի զարգացմանը,

գ) խթանել ազգային և միջազգային համագործակցությանը,

դ) նպաստել ներքին և արտաքին աղբյուրներից ներդրումներին,

ե) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իրականացնել անտառների կայուն կառավարմանը նպաստող այլ գործողություններ:

## III. ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

### 1. Անտառային ոլորտի իրավական դաշտի ձևավորում և կատարելագործում

Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը հիմնված լինելով խորհրդային շրջանի անտառային օրենսգրքի գաղափարախոսության վրա, չի արտահայտում երկրում ձևավորված շուկայական տնտեսության պայմաններում առկա սոցիալ-տնտեսական հարաբերությունները, հողի սեփականության տարբեր ձևերը, ինչպես նաև չի ապահովում ոլորտի կառավարման մարմինների

գործառույթների հստակ տարանջատումը, հասարակայնության մասնակցությունը բնագավառում որոշումների կայացման համապատասխան գործընթացներին, լիարժեք չի բավարարում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի պահանջները, հակասում է անտառային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի:

Ենթաօրենսդրական իրավական ակտերի բացակայությունը լուրջ խոչընդոտ է ստեղծում օրենսգրքի կիրարկման և կայուն անտառկառավարման հարցերում: Անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության նոր անտառային օրենսգրքի, որը կկարգավորի մի շարք կարևոր հարցեր՝

ա) սեփականության տարբեր ձևեր՝ պետական, համայնքային, իրավաբանական անձանց և քաղաքացիների,

բ) սեփականության տարբեր ձևերից բխող հարցերի կարգավորման մեխանիզմները,

գ) անտառների նոր դասակարգումն ըստ նպատակային նշանակության,

դ) անտառի տնտեսական, բնապահպանական և սոցիալական խնդիրները կարգավորող կայուն անտառկառավարմանն ուղղված նոր մեխանիզմներ՝ հավատարմագրային կառավարում, վարձակալություն, անհատույց օգտագործում, աճուրդ, մրցույթներ և այլն,

ե) կառավարման համակարգում գործառույթների հստակ տարանջատում,

զ) անտառածածկ տարածքների ընդլայնում, կենսաբազմազանության պահպանություն, էկոտուրիզմ, ռեկրեացիա և այլն,

է) անտառային ոլորտի որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության ապահովում:

Հայաստանի Հանրապետության նոր անտառային օրենսգրքի ընդունումից հետո դրա լիարժեք կիրարկումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն կառաջանա կատարել անտառային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համապատասխանեցում՝ համաձայն N 3 հավելվածի:

Անտառի ազգային ծրագրի իրավական դաշտի բարելավման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ժամանակացույցը ներկայացվում է N 2 հավելվածի 1-ին կետում:

## 2. Անտառային ոլորտի կառավարման կառուցվածքային հարցեր

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 7-Ն որոշմամբ պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, որն այդ լիազորություններն իրականացնում է «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության և անտառտնտեսությունների միջոցով: Նույն որոշմամբ բնապահպանության նախարարությանը վերապահվել է պետական վերահսկողությունը, ինչպես նաև հատուկ պահպանվող անտառային տարածքների կառավարումը:

1992-2003 թվականների ընթացքում «Հայանտառ» պետական փակ բաժնետիրական ընկերության մի շարք ստորաբաժանումներ լուծարվել են, որոնց թվում են անտառմելիորատիվ, անտառսերմնային, անտառպաշտպանական և անտառգիտափորձարարական կայանները: Նշված ստորաբաժանումների գործունեությունն ուղղված էր անտառապատման, անտառվերականգնման և անտառպաշտպանական միջոցառումների իրականացմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը:

Ֆինանսական միջոցների և վերապատրաստված կադրերի բացակայության պատճառով ներկայումս չեն գործում կենտրոնացված հակահրդեհային և անտառպաշտպանական ծառայությունները, բացակայում են անտառային մոնիտորինգի, անտառների պետական հաշվառման և անտառային պետական կադաստրի վարման համակարգերը, անտառային գիտափորձ ծառայությունը և այլ անհրաժեշտ կառույցներ:

Նշված կառուցվածքային փոփոխությունները, ծառայությունների բացակայությունը, ստորաբաժանումների լուծարումը, թերֆինանսավորումը և սոցիալ-տնտեսական բնույթի բազմաթիվ այլ պատճառներ բացասաբար են ազդել անտառների կառավարման համակարգի արդյունավետության վրա:

Ներկայումս անտառային համակարգում առաջացած բարդ և բազմակողմանի խնդիրների լուծումը պահանջում է անտառների կառավարման համակարգի լուրջ բարեփոխումներ, առանց որոնց անհնար է անցումը շուկայական տնտեսության:

Անտառային ոլորտի կառավարման համակարգի կառուցվածքային փոփոխությունները ներկայացվում են N 2 հավելվածի 2-րդ կետում:

### 3. Անտառաշինություն (անտառկառավարման պլանավորում)

Անտառների կայուն կառավարումը պետք է հիմնված լինի անտառային պաշարների ռացիոնալ և արդյունավետ պլանավորման համակարգերի վրա: Անցյալում անտառկառավարման պլանավորման նպատակով գործում էին երեք հիմնական մակարդակներ`

ա) անտառային տնտեսության երկարաժամկետ զարգացման պլանավորում (15 և ավելի տարիների համար),

բ) անտառաշինական նախագծերով անտառտնտեսվարման պլանավորում (10 տարի),

գ) ընթացիկ (տարեկան) պլանավորում:

Նշված պլանավորման համակարգերն ունեցել են ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:

Անտառների կայուն կառավարման պլանավորմանն ուղղված համալիր միջոցառումները պետք է իրականացվեն`

ա) հեռանկարային զարգացման ռազմավարական անտառպլանավորում (10 տարին մեկ անգամ),

բ) մարտավարական անտառպլանավորում (5 տարին մեկ անգամ),

գ) տարեկան օպերատիվ անտառպլանավորում:

Անտառային պաշարների կայուն օգտագործման և նրանց վերարտադրմանն ուղղված ռազմավարական քայլերի նախանշման համար անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ խնդիրներին.

1) անտառային հողերի և ոչ անտառային հողերի օպտիմալ հարաբերակցությունը և տարածական տեղաբաշխվածությունը,

2) անտառների դերը գյուղական և քաղաքային բնակավայրերի երկարաժամկետ զարգացման հեռանկարում,

3) անտառների` ըստ նպատակային նշանակության դասակարգման չափանիշների գիտական հիմնավորում` հաշվի առնելով նաև երկրի զարգացման հեռանկարը,

4) անտառապատման և անտառվերականգնման նպատակներով գլխավոր ծառատեսակների ընտրությունն ըստ շրջանացման,

5) ծառուտների տնտեսական տեսանկյունից առավել նպատակահարմար կառուցվածքը և նրանցում անտառային կենսաբազմազանության պահպանության հիմունքների զարգացումը,

6) անտառային տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները,

7) հաշվարկային հատատեղերի օպտիմալ չափերը` անտառային պաշարների կայուն օգտագործման նպատակով,

8) անտառային պաշարների վերարտադրության հետ կապված համալիր միջոցառումների տնտեսական հիմնավորումը,

9) անտառային կենսաբազմազանության, առանցքային կենսատոպերի առանձնացումը և պահպանությունը,

10) անտառների հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ ֆունկցիաների բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Անտառկառավարման պլանավորման ոլորտում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 3-րդ կետում:

### 4. Անտառների պետական հաշվառում, անտառային պետական կադաստր և անտառի պետական մոնիտորինգ

Անտառային ոլորտի զարգացումը կապված է անտառների պետական հաշվառման և անտառային պետական կադաստրի վարման արդյունավետ համակարգերի հետ:

Անտառների պետական հաշվառումն անտառային տնտեսության վարման ընթացքում անտառների և անտառային հողերի միաժամանակյա քանակական և որակական ցուցանիշների և նրանցում տեղի ունեցող փոփոխությունների պարբերական գրանցումն է: Հայաստանում վերջին ավելի քան տասը տարիների ընթացքում անտառների պետական հաշվառում չի իրականացվել: Անտառների վիճակի և տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ հավաստի տվյալները ներկայումս բացակայում են, օրինակ, հանրապետության անտառապատվածության տոկոսը:

Անտառների պետական հաշվառման, անտառային պետական կադաստրի վարման և մոնիտորինգի համակարգի ստեղծումը պայմանավորված է եղել անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությամբ, ինչպես նաև մարդկային ռեսուրսների և տեխնիկական

հնարավորությունների սղությամբ:

Անտառների հաշվառման ժամանակակից համակարգերը հիմնվում են հեռազգային և ուղղակի դաշտային անտառզնահատման չափողական մեթոդների վրա՝ գործող մշտական և ժամանակավոր փորձահրապարակների ցանցում, մինչդեռ նախկին համակարգը հիմնված էր անտառշինական նախագծերի տվյալների հիմնականում գրասենյակային վերլուծության վրա: Քանի որ անտառշինական աշխատանքները կատարվում էին 10 տարին մեկ անգամ, իսկ անտառների հաշվառման աշխատանքները՝ 5 տարին մեկ անգամ, ապա պարզ է, որ ներկայումս անտառներում տեղի ունեցող արագ փոփոխությունները պահանջում են անտառների հաշվառման ավելի հաճախակի անհրաժեշտություն:

Ֆինանսական միջոցների առկայության դեպքում նպատակահարմար է բացի անտառների պետական հաշվառման հինգ տարին մեկ իրականացվող աշխատանքների գնահատել նաև անտառային հողերի և բնափայտի ծավալների տեղի ունեցող փոփոխությունները՝ ընթացիկ՝ տարեկան հաշվառման միջոցով:

Անտառների պետական հաշվառման բացակայությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում անտառային ոլորտի հեռանկարային զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման համար: Անտառային պետական կադաստրի համակարգը բացակայում է: Այն պետք է ընդգրկի հավաստի տվյալներ անտառային տեղամասերի տեղադրության և չափերի, նրանց տնտեսական գնահատման և այլնի վերաբերյալ:

Անտառի պետական մոնիտորինգի համակարգի բացակայությունը խոչընդոտում է անտառների վիճակի ուսումնասիրությանը և ապագա զարգացումների կանխատեսմանը՝ անտառների կայուն կառավարման նպատակով:

Անտառների պետական հաշվառման, անտառային պետական կադաստրի և անտառի պետական մոնիտորինգի ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 4-րդ կետում:

**5. Անտառների պահպանություն**

*Ապօրինի հատումների նվազեցում*

Վերջին տարիներին ապօրինի հատումները դարձել են անտառային տնտեսության զարգացմանը խոչընդոտող ամենահիմնական պատճառներից մեկը, որը պայմանավորված է ինչպես աղքատության բարձր մակարդակով, այնպես էլ հետապնդում է կոմերցիոն նպատակներ: Ապօրինի հատումների ներկայիս մակարդակն ավելի քան 10 անգամ գերազանցում է հատումների օրինական ծավալները: Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի N 38 արձանագրային որոշմամբ հաստատվել է ապօրինի հատումների նվազեցման գործողությունների ծրագիրը, որը նախատեսված է առաջիկա 6 տարիների համար՝

1) հասարակության իրազեկության բարձրացում (1,1 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

1) գյուղական չքավորության նվազեցում (8,2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

2) համայնքային անտառային ծրագրեր (11 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

3) այլընտրանքային վառելիքի մատակարարում (5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

4) օրինական փայտից արտադրանքի մատակարարման ավելացում (19,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

5) անտառային կազմակերպությունների վերակառուցում, տեխնիկական և մարդկային ռեսուրսների հզորացում (5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

6) մոնիտորինգի և վերահսկողության համակարգերի հզորությունների ամրապնդում (5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ).

7) անտառի վկայագրում (0,22 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):

1. Հասարակության իրազեկության բարձրացման նպատակն է բարձրացնել իրազեկությունը, որի արդյունքում շահագրգիռ կողմերը կհասկանան կայուն անտառարտադրության հիմնական սկզբունքները և այն վնասը, որն ապօինի հատումները հասցնում են շրջակա միջավայրին և հասարակությանը, իրազեկված լինեն ապօրինի հատումների նվազեցմանն ուղղված այլ միջոցառումների, այլընտրանքային վառելիքի առկա աղբյուրների մասին և ապօրինի հատումները կհամարեն սոցիալապես անընդունելի՝ արդյունքում փոխելով վարքագիծը:

2. Գյուղական չքավորության նվազեցման նպատակն է անտառից 10 կմ հեռավորության սահմաններում գտնվող համայնքներում չքավորությունը կրճատել այնքանով, որպեսզի զգալիորեն

նվազի կախվածությունն անտառից վառելափայտի ինքնակամ, չկանոնակարգված մթերումից: Ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ ապօրինի հատումների մեծամասնությունը պայմանավորված են չքավորությամբ և դրա հետ կապված այլ խնդիրներով, ինչպիսին օրինակ գյուղական վայրերում բնակչության զբաղվածությունն է: Այլընտրանքային ապրելամիջոցներ ստեղծելու համար առկա է գյուղական ներդրումների իրական անհրաժեշտություն: Դա կարող է լինել եկամուտ ստեղծող ցանկացած միջոցառում, ինչպիսիք են գյուղատնտեսական և անտառային արտադրանքի վերամշակումը, զբոսաշրջությունը, փոքր արտադրությունները և այլն:

3. Համայնքային անտառային ծրագրերը նպատակ ունեն դանդաղեցնելու անտառի դեգրադացիան, որի լավագույն հնարավորությունը կարող է նաև կապված լինել այն բնակչության հետ, որն ապրում է անտառին մոտ և օգտագործում է անտառը որպես վառելիքի աղբյուր և ապրելամիջոց:

4. Այլընտրանքային վառելիքի մատակարարումը դիտարկվում է որպես ապօրինի ծառահատումների մեղմման կարևորագույն եղանակներից մեկը: Գազի ներկայիս արժեքը ջերմաէկվիվալենտի առումով ավելի ցածր է, քան գնվող վառելափայտի գինը: Սակայն, աղքատ գյուղական տնտեսությունների համար ընտրությունը պարզ է՝ ավելի էժան է անվճար վերցնել վառելափայտը, քան վճարել գազի համար, նույնիսկ եթե այն էժան է: Դրա հետ կապված միակ ծախսը վառելափայտը հատելու և տուն բերելու ծախսն է:

Այլընտրանքային էներգիայի մատակարարումը ներառում է բնական գազի գյուղաբնակ սպառողների մատակարարման ծավալների մեծացումը, արևային մարտկոցների օգտագործումը, կենսագազի արտադրությունը, ինչպես նաև գյուղական տնտեսություններում էներգիայի արդյունավետության բարձրացումը:

5. Օրինական հատումներից ստացված փայտի արտադրանքի մատակարարման ավելացումը պայմանավորված է անտառտնտեսությունների կողմից արտադրության ավելացման հետ, երբ շուկա մուտք կգործի ավելի շատ վառելափայտ: Ընդ որում, խնդիրը դիտարկվում է երկու հարթությունների վրա՝ համայնքամերձ և համայնքներից հեռու տարածքներում: Առաջին դեպքում այն կարող է ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր գյուղաբնակների համար, որն իր հերթին կնպաստի չքավորության և ապօրինի վառելափայտից կախվածության նվազեցմանը: Երկրորդ դեպքում՝ ավելացած վառելափայտը կարող է վաճառվել առևտրով զբաղվողներին՝ անտառազուրկ քաղաքային բնակավայրեր տեղափոխելու համար՝ նվազեցնելով ապօրինի մթերված բնափայտային արտադրանքի պահանջարկը: Վառելափայտի որոշ քանակ կարելի է վաճառել համայնքներին ավելի ցածր գներով, որը կբերի վճարունակության բարձրացմանը և ապօրինի մատակարարման նվազեցմանը:

6. Անտառների կայուն կառավարմանը և ապօրինի հատումների նվազեցմանն ուղղված գործողությունների ծրագրի իրականացման համար պահանջվում են անտառային հզոր կազմակերպություններ, որոնք կկարողանան ապահովել անտառների կայուն կառավարումը և աջակցել համայնքային անտառկառավարմանը:

7. Մոնիտորինգի համակարգի և վերահսկողության բաղադրիչը հիմնվում է այն իրականության վրա, որ մոնիտորինգի և ստուգման ներկայիս համակարգը լիարժեք չի գործում: Առկա է ռեսուրսների պակասություն՝ անձնակազմի թվաքանակի և սարքավորումների առումով, իսկ անձնակազմի վարձատրությունը շատ ցածր է: Հետևաբար, այս բաղադրիչի նպատակն է անտառի սեկտորի համար ստեղծել մոնիտորինգի գործող և թափանցիկ համակարգ, որը կապահովի անտառային սեկտորի հուսալի վիճակագրություն, կկանխարգելի բնափայտի գողությունը, խաբեությունը և բնափայտի համար վճարելուց խուսափելը և կգործի որպես ապօրինի հատումներից հետ պահող միջոց:

8. Անտառի վկայագրումն հնարավորություն կստեղծի բարելավելու անտառների կայուն կառավարումը, ինչը ենթադրում է, որ անտառկառավարողները իրազեկված կլինեն իրենց անտառում տեղի ունեցած խախտումների մասին: Այն պահանջում է վերահսկման շղթա և խրախուսում է սպառողներին բնափայտ գնել վկայագրված աղբյուրներից՝ դրանով նվազեցնելով ապօրինի արտադրված փայտի արտադրանքի պահանջարկը: Հատկապես կարևոր է, երբ կատարվում է բնափայտային արտադրանքի շուկայավարում ավելի մեծ արժեք ապահովող արտահանման շուկաներ:

Ապօրինի հատումների դեմ պայքարի հաղթահարման գործում, բացի թվարկված ռազմավարական ուղղություններից հարկ է նշել իրավական դաշտի կատարելագործումը, որը մի կողմից կկանխի հնարավոր ապօրինի անտառհատումները, մյուս կողմից կնպաստի ապօրինի հատումների հայտնաբերմանը:

***Անտառների պահպանությունը հրդեհներից և խախտումներից***

Անտառների պահպանությունը հրդեհներից և անտառային խախտումներից (արածեցում, հողազավթում և այլն) անտառային տնտեսության իրականացվող հիմնական գործառույթներից է: Անհրաժեշտ է ձևավորել կառավարման այնպիսի համակարգ, որն արդյունավետ կերպով կպաշտպանի անտառները հրդեհներից և անտառային խախտումներից: Անտառներն արդյունավետ պահպանելու համար անհրաժեշտ է գործուն համակարգ, որի խնդիրներն են.

1) կանխարգելել մարդածին հրդեհները՝ հակահրդեհային քարոզչության և հասարակության իրազեկության բարձրացման միջոցով,

2) բարձրացնել հրդեհների օպերատիվ հայտնաբերման մակարդակը՝ ավելացնելով հակահրդեհային դիտարկումները, հատկապես կենտրոնանալով առավել հրդեհավտանգ անտառտարածքների վրա,

3) ուժեղացնել անտառային տնտեսությունների հակահրդեհային նյութատեխնիկական բազան,

4) համակարգել հակահրդեհային գործողությունները տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

5) կանխարգելել ապօրինի արածեցումները, հողազավթումները և այլ անտառխախտումները՝ ներգրավելով շահագրգիռ բոլոր կողմերին:

Անտառների պահպանության ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 1 հավելվածի 5-րդ կետում:

## 6. Անտառների պաշտպանություն

Բարդ բնակլիմայական պայմանները և տնտեսական գործունեությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում վնասատուների և հիվանդությունների օջախների ավելացման համար՝ խախտելով անտառային էկոհամակարգերի հավասարակշռությունը՝ հանգեցնելով ծառուտների կենսաբանական կայունության կորստի և անտառային տարածքների դեգրադացիայի:

Անտառները վնասատուներից և հիվանդություններից պաշտպանելու համար անհրաժեշտ է գործուն համակարգ, որի խնդիրներն են.

1) անտառպաշտպանական համակարգի կատարելագործումը, նյութատեխնիկական բազայի բարելավումը և անհրաժեշտ իրավական ակտերի ընդունումը,

2) անտառներում պաթոգեն գործոնների օպերատիվ հայտնաբերման և ախտորոշման արդյունավետության բարձրացումը՝ կիրառելով անտառպաթոլոգիական մոնիտորինգի վերգետնյա և հեռազգայուն մեթոդներ,

3) անտառային վնասատուների և հիվանդությունների տարածման վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և արդյունավետ կիրառումը,

4) անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ակտիվ պայքարի եղանակների ինտեգրացված իրականացումը՝ ֆլորայի և ֆաունայի համար անվնաս մեթոդների կիրառմամբ,

5) արտադրական արտանետումների, թափոնների և այլ բացասական ազդեցությունների հետևանքով վնասված անտառային տարածքների ընդլայնման կանխարգելումը:

Անտառների պաշտպանության ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ գործողությունները ներկայացվում են N 1 հավելվածի 6-րդ կետում:

## 7. Անտառվերականգնում և անտառապատում

Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված ռազմավարության մշակման ընթացքում իրականացվել են ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության արդյունավետ անտառապատվածության վերաբերյալ, հաշվի առնելով հետևյալ գործոնները.

1) բնակլիմայական առանձնահատկությունները և հողածածկի վիճակը,

2) ջրհավաք ավազանների անտառապատվածության անհրաժեշտ մակարդակը,

3) հողապաշտպան և ջրակարգավորիչ անտառաշերտերի անհրաժեշտ չափը,

4) բնակչության խտությունը, օդի աղտոտվածության աստիճանը և բնույթը,

5) քաղաքային բնակչության համար շրջապատի անտառապատվածության անհրաժեշտ մակարդակը՝ մեկ շնչին ընկնող կանաչապատ տարածքը,

6) քաղաքամերձ անտառների ռեկրեացիոն հնարավորությունները, հաճախման ինտենսիվությունը:

Հաշվարկվել է, որ հանրապետության արդյունավետ անտառապատվածությունը կկազմի 20,1%, եթե անտառածածկ տարածքներն ընդլայնվեն շուրջ 266,5 հազար հեկտարով:

Հաշվի առնելով, որ հանրապետությունում առկա են մեծաթիվ էրոզացված հողատարածքներ (ընդհանուրի 1/3-ը), որոնց ավելի քան 60 %-ը խիստ էրոզացման հետևանքով դուրս են եկել տնտեսական օգտագործումից, արդյունավետ անտառապատվածությունը հաշվարկելիս գերակայությունը տրվել է լեռնալանջերի էրոզիոն պրոցեսների մեղմմանը և անտառբարելավման միջոցով գյուղատնտեսական օգտագործումից հանված հողատարածքները տնտեսական ոլորտ վերադարձնելու հնարավորությունները:

Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների նպատակն է պահպանել և ավելացնել անտառածածկ տարածքները՝ կանխելով էրոզիան, անտառների տեսակային կազմի անցանկալի փոփոխությունները և այլն: Անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամկետներում ապահովել էներգետիկ ճգնաժամի և դրան հաջորդած տարիներին հատված անտառտարածքներում երիտասարդ ծառուտների ձևավորումը: Անտառվերականգնումը և անտառապատումը պետք է իրականացվեն գիտականորեն հիմնավորված եղանակներով՝ հաշվի առնելով անտառների անհրաժեշտ տեսակային կազմը, անտառաճման պայմանները և օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ:

Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

1) ներդնել անտառվերականգնման մոնիտորինգի համակարգ՝ անտառվերականգնման դինամիկան և որակն օբյեկտիվորեն գնահատելու և կանխատեսելու համար,

2) կրճատել անտառում բնական վերաճի և երիտասարդ անտառմշակույթների կորուստները՝ անբավարար ագրոտեխնիկական միջոցառումների, արածեցման, անտառային հրդեհների և այլ գործոնների հետևանքով,

3) ներդնել ժամանակակից տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ՝ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար,

4) անցնել «հատում-անտառվերականգնում-անտառաճեցում» շարունակական նոր սկզբունքով գործող տեխնոլոգիաների՝ կոնկրետ անտառաճման պայմաններին և անտառի էկոլոգիական ֆունկցիաներին համապատասխան,

5) կիրառել տնտեսական խթանող մեխանիզմներ անտառտնտեսական աշխատանքների իրականացման ընթացքում հատատեղերում մատղաշի և հողաշերտի պահպանման, հատատեղերի մաքրման նպատակով,

6) բարձրացնել անտառվերականգնման աշխատանքների որակը՝ տնտեսական նոր մեթոդների կիրառման միջոցով, այդ թվում հաշվի առնելով նաև նոր հիմնվող անտառների բնապահպանական տեսանկյունով պայմանավորված լրացուցիչ տնտեսական եկամուտները,

7) կատարելագործել անտառվերականգնման իրավական բազան:

Անհրաժեշտ է վերականգնել և զարգացնել սերմնային և տնկարանային տնտեսությունները՝ ելնելով անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալներից և կարիքներից: Անհրաժեշտ են իրականացնել նաև անտառային սերմերի որակի ստուգման և բարձրացման միջոցառումներ, այդ թվում դրանց՝ վնասատուներից և հիվանդություններից պաշտպանելու ուղղությամբ:

Տնկարանային տնտեսությունները պետք է հիմնված լինեն նոր տեխնոլոգիաների և աշխատանքների մեխանիզացման վրա՝ բարելավելով ծառաթփատեսակային տեսականին և իջեցնելով տնկանյութի միավոր ինքնարժեքը: Տնկարաններում անհրաժեշտ է օգտագործել մշտական էլիտային անտառսերմնային պլանտացիաներից ձեռք բերված բարձրորակ սերմեր և իրականացնել անտառային սերմերի սելեկցիոն աշխատանքներ:

Հանրապետությունում արդյունավետ անտառվերականգնում և անտառապատում իրականացնելու համար կարևոր են նաև անտառների արտադրողականության բարձրացման ուղղությամբ կատարվող գործողությունները, քանի որ անտառների ներկայիս արտադրողականության մակարդակը չի համապատասխանում անտառաճման պոտենցիալ պայմաններին և բավական ցածր է:

Անտառների արտադրողականությունը հնարավոր է բարձրացնել էքստենսիվ եղանակով՝ անտառային պաշարների ավելացում անտառածածկ տարածքների ընդլայնման հաշվին և ինտենսիվ եղանակով՝ միավոր տարածքից ստացվող բնափայտի տարեկան աճի ավելացման հաշվին:

Արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ է օպտիմալացնել անտառների լրիվությունը, աջակցել բնական վերականգնմանը, բարելավել անտառի տեսակային կազմը՝ ճիշտ և ժամանակին կիրառելով հատումներ (անտառվերականգնման, միջանկյալ և այլն), ինչպես նաև պահպանելով անտառային կենսաբազմազանությունը և նպաստելով անտառների բնապահպանական հատկությունների զարգացմանը:

Անտառվերականգնման և անտառապատման ոլորտում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 1 հավելվածի 7-րդ կետում:

**8. Անտառօգտագործում**

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացվող անկայուն անտառօգտագործումը մեծ վնաս է հասցնում Հայաստանի անտառներին` միաժամանակ բացասաբար անդրադառնալով անտառտնտեսվարման մյուս ոլորտների վրա: Էներգետիկ և տնտեսական ճգնաժամի հետևանքով զգալիորեն աճել է բնափայտի, այդ թվում վառելափայտի պահանջարկը, որը հիմնականում պայմանավորված է բնակչության ծանր սոցիալական վիճակով: Հատումները հիմնականում իրականացվում են բնակավայրերին հարակից անտառներում` բերելով դրանց խոցելիության բարձրացմանը:

Մյուս կողմից կոմերցիոն նպատակներով իրականացվող հատումների ընթացքում շինափայտ ստանալու համար մթերվում են տնտեսապես առավել արժեքավոր ծառատեսակներ` վտանգելով անտառների ապրանքաորակական հատկանիշները:

Ներկայիս չհամակարգված անտառօգտագործումը գերազանցում է անտառների ընդհանուր տարեկան աճը` բացասաբար անդրադառնալով անտառների արտադրողականության վրա և բերելով անտառների դեգրադացիայի:

Տնտեսական, էկոլոգիական և սոցիալական առումով անտառօգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հիմնվել կայուն անտառկառավարման սկզբունքների և չափանիշների վրա` հստակ տարանջատելով անտառներն ըստ իրենց նպատակային նշանակության:

Հայաստանի անտառային հարուստ կենսաբազմազանությունը լայն հնարավորություններ է ստեղծում կողմնակի անտառօգտագործման համար: Բազմաթիվ դեղաբույսերի, հատապտուղների, վայրի պտուղների, սնկերի և այլ ոչ փայտային անտառային արտադրանքի հավաքումը, վերամշակումը և իրացումը, մեղվաբուծությունը, կարող են զգալի եկամուտներ ապահովել ոչ միայն անտառային տնտեսության, այլև գյուղական բնակչության համար` բարելավելով սոցիալական վիճակը, ստեղծելով աշխատատեղեր և նվազեցնելով բնափայտի օգտագործման նպատակով անտառների վրա գործադրվող ճնշումը:

Հայաստանի Հանրապետությունում կողմնակի անտառօգտագործման գերակա ուղղություններից են անտառների ռեկրեացիոն հնարավորությունների, զբոսաշրջության և որսորդական տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ոչ անտառապատ տարածքներում գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման մեխանիզմների մշակումն ու ներդնումը:

Անհրաժեշտ է պայմաններ ստեղծել անտառամերձ համայնքներում մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար, ինչպես նաև խթանել ներքին և արտաքին աղբյուրներից ներդրումները:

Անտառօգտագործման ոլորտում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 1 հավելվածի 8-րդ կետում:

**9. Անտառի վկայագրում**

Անտառի վկայագրումը հավասարակշռում է անտառկառավարման գործընթացներում բնապահպանական, սոցիալական և տնտեսական ասպեկտները, ինչպես նաև կապ է ստեղծում սպառողների և կայուն անտառտնտեսվարման գործունեության միջև:

Անտառի վկայագրումը որպես մարքետինգային գործիք նպաստում է բնափայտի անհայտ և կասկածելի ծագում ունեցող աղբյուրների վերացմանը և կունենա հետևյալ բարենպաստ ազդեցությունը.

ա) անտառի վկայագրման ազգային ստանդարտի մշակումը և կիրառումը կխթանի պետական և ոչ պետական անտառների կայուն կառավարմանը,

բ) առավել լայն հնարավորություններ և նպաստավոր մրցակցային պայմաններ կստեղծի վկայագրված անտառային տեղական արտադրանքների արտաքին շուկայում սպառման համար,

գ) կկանխարգելի և կնվազեցնի ապօրինի հատումները և կնվազեցնի ստվերային անտառօգտագործումը,

դ) կնպաստի կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը,

ե) կխթանի հասարակության մասնակցությանը անտառների կայուն անտառկառավարմանը`

ապահովելով որոշումներ ընդունելու հրապարակայնությանը,

գ) կապահովի անտառային ոլորտի աշխատողների համար առավել անվտանգ և ապահով աշխատանքային պայմաններ և սոցիալական երաշխիքներ:

Անտառի վկայագրման ոլորտում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 1 հավելվածի 9-րդ կետում:

## 10. Ֆինանսատնտեսական ոլորտ

Անտառային ոլորտի ֆինանսատնտեսական ծանր վիճակը պայմանավորված է վերջին տասնամյակներում վարվող քաղաքականությամբ, երբ պետական բյուջեից հատկացումները տարիներ շարունակ մնացել են նույն մակարդակին (շուրջ 100 մլն դրամ), իսկ հիմնական մուտքերը գոյացել են սեփական եկամուտներից՝ հիմնականում բնափայտի իրացումից (80-90%): Այդ իսկ պատճառով անցած տարիների ընթացքում անտառային ոլորտում որևէ ներդրում չի կատարվել, իսկ եղած նյութատեխնիկական բազան ենթարկվել է բարոյական և ֆիզիկական մաշվածության:

Անցած տարիներին վարվող ֆինանսատնտեսական քաղաքականությունը հանգեցրել է մի շարք լուրջ խնդիրների.

ա) անտառային ոլորտի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների սակավություն,

բ) անտառային տնտեսությունների ծանր ֆինանսական վիճակ,

գ) ֆինանսական միջոցների տարեկան ուշացած հատկացումներ,

դ) հաշվապահական հաշվառման ոչ ժամանակակից համակարգ,

ե) շուկայական հարաբերությունների ցածր մակարդակ,

զ) անտառկառավարման պլանների բացակայություն և անարդյունավետ պլանավորում,

է) միջազգային ֆինանսական մեխանիզմների ոչ արդյունավետ օգտագործում,

ը) անտառային պաշարների ոչ արդյունավետ օգտագործում և մեծածավալ կորուստներ,

թ) անտառային պաշարների ստվերային օգտագործման մեծ ծավալներ և այլն:

Ֆինանսատնտեսական ոլորտում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 10-րդ կետում:

## 11. Անտառային ոլորտի բնապահպանական հարցեր

*Կենսաբազմազանության պահպանություն*

Հայաստանի աշխարհագրական տեղադիրքը և լեռնային բարդ ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության հարուստ տեսականու, էնդեմիզմի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը:

Անտառային կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված է անտառային էկոհամակարգերի բնապահպանական ֆունկցիաների կարևորությամբ, որոնցից են.

ա) ածխածնի երկօքսիդի կլանում և կլիմայի կարգավորում,

բ) հողի էրոզիայի և անապատացման կանխում,

գ) ջրային բալանսի կարգավորում,

դ) գենետիկական նյութի մատակարարում,

ե) ռեկրեացիոն ծառայությունների տրամադրում,

զ) միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում և այլն:

Անտառային կենսաբազմազանությանը սպառնացող հիմնական գործոններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են մարդու տնտեսական գործունեության հետ, որոնք են.

ա) բնակմիջավայրի մասնատումը և կորուստը, մասնավորապես անտառային հողերի գյուղատնտեսական նպատակով օգտագործման և հանքային ռեսուրսների շահագործում հետևանքով,

բ) գերարածեցումը,

գ) անտառների անկայուն կառավարումը, ներառյալ ապօրինի ծառահատումները,

դ) բնափայտային և ոչ բնափայտային ռեսուրսների գերօգտագործումը,

ե) օտարածին տեսակների ներմուծումը,

ա) ճանապարհաշինությունը, հիդրոէլեկտրակայանների կառուցումը, չկարգավորված ռեկրեացիոն գործունեությունը և այլն,

գ) միջավայրի աղտոտումը:
Նշված բոլոր գործոնները նպաստում են անտառային էկոհամակարգերի դեգրադացմանը և կենսաբազմազանության կորստին:

*Կլիմայի փոփոխություն*

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Միացյալ Ազգերի Կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային Կոնվենցիան, որի նպատակն է հանրության ուշադրությունը հրավիրել կլիմայի գլոբալ փոփոխության հիմնախնդրի վրա:
Անտառները հանդիսանում են մթնոլորտից ածխածնի երկօքսիդի կլանիչ և պահպանիչ: Սակայն մի կողմից հանքային վառելանյութի օգտագործման աճը, մյուս կողմից անտառածածկ տարածքների կրճատումը հանգեցնում են մթնոլորտում ածխաթթու գազի ավելացմանը: Կլիմայի փոփոխության տեսանկյունից առաջնային հիմնախնդիրներն են.
ա) անտառային էկոհամակարգերի հնարավոր խոցելիությունը և հարմարվողականության փոփոխությունը, ինչպես նաև նշված գործընթացների կանխարգելմանն ուղղված միջոցառումների բացակայությունը,
բ) անտառների ընդհանուր կենսազանգվածի և պաշարների կորուստը,
գ) անտառային ոլորտի անբավարար ներգրավվածությունը կլիմայի փոփոխության մեղմանն ուղղված գլոբալ միջոցառումներին:

*Հողի և ջրի պահպանություն*

Անտառների անկայուն շահագործումը, անտառային հողերի օգտագործումը հողագործության, անասնապահության, արդյունաբերության և այլ նպատակներով արագացնում և խորացնում են էրոզիան, անտառային գետերի և ջրամբարների տղմակալման և էվտրոֆացման գործընթացները՝ խախտելով անտառի հիդրոլոգիական ռեժիմը, խթանելով ջրային էկոհամակարգերի դեգրադացիան:
Հողերի դեգրադացիայի և անապատեցման հանգեցնող հիմնախնդիրներից են անկայուն գյուղատնտեսական գործունեությունը, գերարածեցումը, անտառազրկումը և անտառների դեգրադացիան, թեև անտառային ոլորտին առավելապես առնչվում են վերջին երկուսը:
Գերարածեցումը հանգեցնում է խոտհարքների, արոտավայրերի բուսածածկի, անտառի բնական վերարտադրության անկման, հողաշերտի կոմպակտացման և էրոզիայի առումով հողերի խոցելիության բարձրացման: Անտառազրկման և անտառների դեգրադացիայի պատճառ են հանդիսանում բնափայտի գերհատումները, անտառների փոխակերպումը երկրորդական ծագման կերահանդակների, անվերահսկելի անտառային հրդեհները, ինչպես նաև անտառային հողերի նպատակային նշանակության փոփոխումը:
Անտառի ոլորտի բնապահպանական ասպեկտների ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 11-րդ կետում:

## 12. Անտառային ոլորտի սոցիալական հարցեր

Հայաստանի Հանրապետության անտառները հիմնականում ունեն բնապահպանական նշանակություն և նախկինում էական դեր չեն ունեցել հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում, բացառությամբ անտառամերձ համայնքների, որոնց թիվը հանրապետությունում հասնում է 230-ի: Անտառամերձ համայնքների համար անտառը միշտ ունեցել է կարևոր նշանակություն և հիմնականում օգտագործվել է որպես հանգստի վայր, բնակչության լրացուցիչ եկամտի աղբյուր, ոչ բնափայտային անտառային արդյունքի, անասնակերի ապահովման կայուն բազա, համայնքի ջրային ռեսուրսների պահպանման միջոց, վառելիք և այլն:
Մինչև 1990 թվականը համայնքները բնափայտը օգտագործում էին փոքր ծավալներով, հիմնականում կենցաղային կարիքների բավարարման համար: Սակայն 1990 թվականից հետո անտառանյութը հիմնականում օգտագործվում է սեփական կարիքների ապահովման համար (որպես վառելիք) և առևտրային նպատակներով:
Կարևորվում է նաև անտառի ռեկրեացիոն դերը, ինչպես նաև նրա նշանակությունը զբոսաշրջության զարգացման համար, որը կարող է նպաստել բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը և անտառների ճնշման նվազեցմանը:
Անտառային ոլորտի սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներից են.

1) համայնքներում առկա գործազրկությունը և չքավորությունը,
2) համայնքների մեծ կախվածությունն անտառային ռեսուրսներից (բնափայտ, ոչ բնափայտային անտառային արդյունք, արածեցում, խոտհունձ և այլն),
3) էներգետիկ ռեսուրսների դժվարամատչելիությունը,
4) վառելափայտը որպես գյուղական և քաղաքային բնակչության ստվար շերտերի գոյատևման մատչելի միջոց,
5) անտառամերձ բնակավայրերի ճանապարհների, հեռահաղորդակցության (և այլն) վատթար վիճակը,
6) անտառների կայուն կառավարման ոլորտում հասարակության և շահագրգիռ համայնքների մասնակցության ցածր մակարդակը (ներգրավման մեխանիզմների բացակայությունը կամ անկատարություն),
7) անտառային ոլորտի վերաբերյալ հասարակության իրազեկության ցածր մակարդակը,
8) քաղաքային անտառպուրակների և կանաչապատ տարածքների նվազումը,
9) անտառային ոլորտի աշխատողների անբավարար վարձատրությունը,
10) աշխատանքի գնահատման և խրախուսման անկատար համակարգը,
11) աշխատանքային պայմանների և անվտանգության տեխնիկայի ցածր մակարդակը,
12) ոլորտում երիտասարդ անտառային կադրերի պակասը:
Անտառային ոլորտի սոցիալական ասպեկտների ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 12-րդ կետում:

## 13. Անտառային գիտություն

Անտառային կայուն կառավարման զարգացումը հնարավոր չէ առանց անտառային գիտության զարգացման: Անտառային ոլորտի առջև ծառացած մի շարք խնդիրների լուծման և արդյունավետ միջազգային համագործակցության արդյունքում ի հայտ են եկել նախկինում չուսումնասիրված կամ անբավարար ուսումնասիրված գերակա ուղղություններ: Անտառային գիտության զարգացման նպատակով անհրաժեշտ է.
1) նախանշել անտառային ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները և իրականացնել թեմատիկ ուսումնասիրություններ՝ այդ թվում հիմնվելով երկրի ստանձնած միջազգային պայմանագրերի, ինչպես նաև թեմատիկ աշխատանքների փորձագիտական և ավարտված ուսումնասիրությունների արդյունքների վրա,
2) համակարգել անտառային ոլորտում տարվող ուսումնասիրությունները համալիր անտառային գիտական ծրագրերի իրականացման միջոցով,
3) խթանել հանրապետության տարբեր բնակլիմայական շրջաններում մոդելային գիտափորձարարական անտառների ստեղծումը՝ անտառային տնտեսության վարման նոր տեխնոլոգիաների և առաջավոր փորձի ներդրման նպատակով,
4) խթանել համակարգչային նոր մեթոդների, ծրագրերի և մոդելների ներդրումն անտառկառավարման համակարգում,
5) բարելավել գիտահետազոտական անտառային կազմակերպությունների նյութատեխնիկական բազան,
6) ընդլայնել անտառային գիտական ուսումնասիրությունների ավանդական շրջանակը՝ ներառելով տնտեսական, բնապահպանական և սոցիալական բնագավառները,
7) աշխատանքներն իրականացնել միջազգային և գլոբալ նշանակության անտառային գիտական թեմաներով:
Անտառային գիտության ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 13-րդ կետում:

## 14. Անտառագիտական կրթություն, ուսուցում և իրազեկում

*Կրթություն և ուսուցում*

Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի մարդկային ռեսուրսների վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ապահովված չէ բավարար թվով որակյալ մասնագետներով:
1950-1990 թթ. Հայաստանում չի եղել բարձրագույն անտառագիտական կրթություն: Ներկայումս

որոշ կրթական հաստատություններ (Հայկական գյուղատնտեսական ակադեմիան, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը) իրականացնում են անտառագետ մասնագետների պատրաստումը: Հայաստանում բացակայում են միջին մակարդակի անձնակազմի (անտառային տեխնիկ) և անտառային աշխատանքների մասնագիտական տեխնիկական կրթական հաստատությունները: Անտառային ոլորտի կառավարման համակարգում առկա է որակավորված մասնագետների խիստ պակաս (մասնագետների թիվը չի գերազանցում ընդհանուրի 4%):

Ոլորտի կրթական և ուսուցման համակարգի զարգացմանը խոչընդոտում են հետևյալ գործոնները.

1) առանձին առարկաների գծով բարձր որակավորման գիտամանկավարժական կադրերի պակասը,

2) դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների սակավությունը,

3) լաբորատոր սարքավորումների և գործիքների բացակայությունը,

4) անտառօգտագործման առնտրային բնագավառին առնչվող ուսուցման բացակայությունը,

5) գործնական ուսուցման և դաշտային ուսուցողական կենտրոնների անբավարարությունը,

6) պետական պատվերով ուսանողական տեղերի անբավարար քանակությունը և անտառային ոլորտում աշխատանքով ապահովվելու մեխանիզմների անկատարությունը,

7) մասնագետների շարունակական վերապատրաստման և վերաորակավորման ուսումնական ծրագրերի և հնարավորությունների պակասը:

*Իրազեկում*

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համեմատաբար բարձր է բնակչության իրազեկությունը անտառների դերի և նշանակության վերաբերյալ, սակայն անհրաժեշտ է հասարակայնության լայն շրջանակներին իրազեկել անտառների կորստի բնապահպանական և սոցիալ-տնտեսական հետևանքների մասին:

Ցածր է իրավական տեղեկացվածությունը անտառկառավարման խնդիրների վերաբերյալ և բնակչության լայն զանգվածները զրեթե անտեղյակ են անտառային ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ:

Կարևոր խնդիր է նաև տեղեկատվության մատչելիության և անտառկառավարման համակարգի գործունեության թափանցիկության ապահովումը:

Անտառային կրթության, ուսուցման և իրազեկման ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 14-րդ և 15-րդ կետերում:

## 15. Միջազգային համագործակցություն

Աշխարհում ծառացած մի շարք գլոբալ բնապահպանական խնդիրների լուծումը պահանջում է բոլոր երկրների ակտիվ մասնակցություն: Անտառային ոլորտում միջազգային համագործակցության նպատակն է՝ անտառների կայուն կառավարումը:

Անտառային ոլորտում միջազգային համագործակցության նպատակն է.

1) խթանել այն գործողությունները, որոնք բխում են մասնավորապես անտառային սկզբունքներից և Կենսաբազմազանության, Կլիմայի Փոփոխության, Անապատեցման դեմ պայքարի միջազգային կոնվենցիաների պահանջներից,

2) բարձրացնել անտառային ոլորտի միջազգային գիտատեխնիկական համագործակցության արդյունավետությունը, նախանշելով հեռանկարային ուղղությունները,

3) ընդլայնել համատեղ իրականացվող անտառային ծրագրերի շրջանակը, ամբողջացնելով և համակարգելով միջազգային աղբյուրների առկա հնարավորությունները,

4) նպաստել անտառային ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրմանը,

5) խթանել անտառային վերամշակված արտադրանքի արտահանման հնարավորությունները՝ երկրում նախաձեռնելով անտառների վկայագրման գործընթացներ,

6) նպաստել Հայաստանի Հանրապետության և միջազգային անտառային մասնագետների միջև փորձի փոխանակման, փոխայցելությունների, անտառային բնագավառի միջազգային հավաքների մասնակցության շնորհիվ:

Անտառային ոլորտի միջազգային համագործակցության ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումները ներկայացվում են N 2 հավելվածի 16-րդ կետում:

## IV. Անտառի ազգային ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Անտառի ազգային ծրագրի իրականացումը պայմանավորված է առաջարկվող միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրներով: Այդ նպատակով պետք է համակարգել միջազգային և ազգային ֆինանսական միջոցները՝ դրանք նպատակաուղղելով անտառային ոլորտի զարգացման առաջնահերթ աշխատանքների իրականացմանը:

Անտառկառավարման աշխատանքների տնտեսական արդյունավետության բարձրացման շնորհիվ և ստորև նշված միջոցառումների իրականացման արդյունքում կարող են առաջանալ զգալի ներքին ֆինանսական միջոցներ.

1) պայքար անտառային ոլորտում ստվերայնության դեմ,

2) ապօրինի անտառանյութի մթերման և իրացման ներքին ծավալների կրճատում,

3) հանրապետությունից անմշակ բնափայտային հումքի արտահանման մաքսային քաղաքականության խստացում և ներկրման խրախուսում,

4) անտառին պատճառված վնասի հատուցման համակարգի կատարելագործում,

5) օրինական անտառօգտագործման արդյունքում եկամուտների ավելացում,

6) բնօգտագործման վճարների դրույքաչափերի օպտիմալացում,

7) վկայագրված բնափայտային արտադրանքի ծավալների խթանում ներքին և արտաքին շուկաներում,

8) ոչ բնափայտային անտառային արտադրանքի մասնաբաժնի ավելացում ընդհանուր անտառօգտագործման ծավալներում,

9) Հայաստանի Հանրապետությունում անտառային մարքետինգի հիմունքների զարգացում,

10) ռեկրեացիոն և այլ նպատակներով անտառային հողերի վարձակալության տրամադրման մեխանիզմների բարելավում,

11) արդյունավետ հարկային քաղաքականության իրականացում՝ անտառվերականգնման, անտառապատման և այլ տնտեսապես ոչ եկամտաբեր անտառտնտեսական միջոցառումների նկատմամբ,

12) Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի կարողությունների հզորացում,

13) անտառների բնապահպանական ֆունկցիաների (կլիմայակարգավորիչ, հողապաշտպան, ջրապաշտպան և այլն) ապահովման համար տնտեսական փոխհատուցման մեխանիզմների զարգացում,

14) հասարակական և այլ կազմակերպությունների ներգրավում:

Ելնելով անտառների բնապահպանական ազգային և գլոբալ նշանակությունից, անտառային ոլորտի խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է ապահովել միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը:

Անտառի ազգային ծրագրի իրականացման ֆինանսավորման միջազգային հիմնական աղբյուրներից են.

1) Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամը,

2) Կիոտոյի արձանագրության Մաքուր Զարգացման Մեխանիզմների շրջանակներում նախատեսված անտառապատման/անտառվերականգնման աշխատանքներին տրամադրվող ֆինանսական միջոցները,

3) Համաշխարհային բանկը,

4) Միջազգային զարգացման գործակալությունները,

5) Միացյալ Ազգերի Կազմակերպությունը և այլն:

## V. Անտառի ազգային ծրագրի համակարգում և մոնիտորինգ

Անտառի ազգային ծրագրի հաջող իրականացման նպատակով կստեղծվի ազգային համակարգող խորհուրդ, որի կազմում կարող են ընդգրկվել հետևյալ հիմնական շահառուները՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության, Հայաստանի Հանրապետության բնապահպանության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունները, անտառային ոլորտի գիտական և հասարակական կազմակերպությունները, միջազգային դոնոր կազմակերպությունները և այլն:

Ազգային համակարգող խորհրդի խնդիրներն են՝

1) նպաստել շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությանը,

2) համակարգել անտառի ազգային ծրագրի կազմակերպչական գործընթացները,
3) ապահովել շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության փոխանակումը,
4) իրականացնել անտառի ազգային ծրագրի իրականացման մոնիտորինգ,
5) ապահովել անտառի ազգային ծրագրի իրականացման թափանցիկությունը,
6) ապահովել անտառի ազգային ծրագրի աշխատանքների վերաբերյալ հասարակության իրազեկությունը և շահագրգիռ կողմերի մասնակցությունը,
7) պարբերաբար ներկայացնել հաշվետվություններ ազգային համակարգող խորհրդի գործունեության, մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների ներդրման և իրացման ընթացքի վերաբերյալ, ապահովել դրանց օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաև նախատեսված և փաստացի արդյունքների վերլուծությունը:

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2005 թվականի**
**հուլիսի 21-ի N 1232-Ն որոշման**

## ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրի միջոցառումները նախատեսվում են իրականացնել հետևյալ ժամկետներում՝
1) կարճաժամկետ՝ 2006-2008թթ.
2) միջնաժամկետ՝ 2008-2010թթ.
3) երկարաժամկետ՝ 2010-2015թթ.

| N | Ոլորտ | Միջոցառման անվանումը | Կատարող | Ժամկետը | Ակնկալվող արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1. | Օրենսդրություն | 1. ՀՀ անտառային օրենսգրքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում (տես հավելված 3) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | ՀՀ անտառային օրենսգրքի կիրարկումն ապահովող միջոցառումներ |
| | | 2. ՀՀ անտառային օրենսգրքի ընդունումից հետո համակարգին առնչվող այլ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | |
| 2. | Կառուցվածքային բարեփոխումներ | 1. Անտառկառավարման պետական մարմինների կառուցվածքային բարեփոխումներ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Անտառային համակարգի կառավարման տնտեսական և բնապահպանական արդյունավետության բարձրացում, մարմինների գործառույթների հստակեցում, կայուն անտառկառավարում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 1) Անտառների պահպանության ծառայության ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ | Անտառների արդյունավետ պահպանություն, ապօրինի գործողությունների նվազեցում |
| | | 2) Անտառային տնտեսության կառավարման պլանավորման (անտառշինական նախագծեր) ստորաբաժանման ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ | Անտառկառավարման պլանների առկայություն, կայուն անտառկառավարում |
| | | 3) Անտառպաշտպանական հիմնարկի ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ | Անտառի վնասատուների և հիվանդությունների վնասակարության մոնիտորինգ և կանխարգելում, կենսունակ անտառների առկայություն |
| | | 4) Անտառսերմնային լաբորատորիայի ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ | Ստուգված և որակյալ սերմնանյութի առկայություն, որակյալ տնկանյութի ստացում, անտառվերականգնման և անտառապատման արդյունավետության բարձրացում |
| | | 5) Անտառմելիորատիվ հիմնարկի ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ | Անտառապատված տարածքների ընդլայնում |
| | | 6) Անտառգիտասփյուռ ծառայության ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ | Անտառային ոլորտի շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացում և մարդկային ռեսուրսների զարգացում |
| | | 7) Անտառների հաշվառման, մոնիտորինգի և կադաստրի վարման համակարգի ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Կայուն անտառկառավարման արդյունավետ պլանավորում. ԱԿԲ-ի, պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, վերլուծություն և տրամադրում |
| | | 2. Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի | ՀՀ գյուղատնտեսությ | կարճաժամկետ- | Անտառվերականգնման և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հզորացում | ան նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական և միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | միջնաժամկետ-երկարաժամկետ | անտառապատման աշխատանքների խթանում |
| 3. | Անտառկառավարման պլանավորում (անտառշինական նախագծերի մշակում) | 1. ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզերի անտառային հողերի շուրջ 180 հազ. հա անտառշինության և անտառկառավարման պլանների կազմում, այդ թվում համայնքային անտառների (Կողբ, Բերդավան, Ենոքավան, Հովք) համար` փորձնական ծրագրեր | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Տավուշի և Գեղարքունիքի մարզերի անտառային ֆոնդի կառավարման պլաններ |
| | | 2. ՀՀ Արարատի, Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի անտառային հողերի շուրջ 280 հազ. հա անտառշինության և անտառկառավարման պլանների կազմում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Արարատի, Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի անտառային ֆոնդի կառավարման պլաններ |
| 4. | Անտառների հաշվառում, կադաստր և մոնիտորինգ | 1. Անտառների հաշվառման, կադաստրի վարման և մոնիտորինգի համակարգի ստեղծման ծրագրային առաջարկությունների մշակում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | կարճաժամկետ | Անտառների հաշվառում, կադաստրի վարում և մոնիտորինգի իրականացում |
| | | 2. Անտառների հաշվառման իրականացում (460,0 հազ. հա) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ | Անտառների հաշվառման և անտառկառավարման պլանավորման իրականացում |
| | | 3. Անտառի համալիր մոնիտորինգի իրականացում (460,0 հազ. հա) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ միջնաժամկետ երկարաժամկետ | Անտառների պահպանության, ապօրինի գործողությունների կանխարգելման, անտառների ֆիտոսանիտարական վիճակի և այլնի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | | գնահատում և կանխատեսում |
| | | 4. Անտառի կադաստրի վարում (460,0 հազ. հա) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ միջնաժամկետ երկարաժամկետ | Անտառային ռեսուրսների գնահատում, արդյունավետ անտառօգտագործում, անտառի սեփականության տարբեր ձևերի գրանցում |
| | | 5. Անտառային ոլորտում երկրատեղեկատվական համակարգի ստեղծում<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | կարճաժամկետ միջնաժամկետ | Տվյալների օպերատիվ մշակման և տրամադրման համակարգի առկայություն |
| 5. | Անտառի պահպանություն, ապօրինի հատումների նվազեցում | 1. Անտառների պահպանության ծառայության անձնակազմի համար նյութատեխնիկական բազայի ապահովում (փոխադրամիջոցներ, հանդերձանք, կապի միջոցներ, զենք և այլն) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Անտառների պահպանության ծառայության բարելավված նյութատեխնիկական բազա, անտառների արդյունավետ պահպանություն |
| | | 2. ա) Անտառների պահպանության ծառայությանը անձնակազմի վերահսկողության բաժնի հզորությունների ամրապնդում<br>բ) Անտառների մոնիտորինգի համակարգի հզորությունների ամրապնդում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Անտառներում հրդեհների կանխարգելում, արդյունավետ պայքար անտառային հրդեհների դեմ |
| | | 3. Անտառների պահպանության ծառայությանը հակահրդեհային տեխնիկայով ապահովում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Աշխատողների բարելավված սոցիալական և բարոյական վիճակ, արդյունավետ աշխատանք |
| | | 4. Անտառների պահպանության ծառայության աշխատողների նյութական և բարոյական խրախուսման համակարգի ներդրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Անտառների պահպանության ծառայության աշխատողների բարելավված սոցիալական վիճակ |
| | | 6. Համայնքների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում հասարակական | ՀՀ գյուղատնտեսության | կարճաժամկետ-միջնաժամկե | Անտառների պահպանության բարելավում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպությունների ներգրավում՝ անտառպահպանության միջոցառումներին | նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | տ - երկարաժամկետ | շահագրգիռ կողմերի ներգրավմամբ |
| 6. | Անտառների պաշտպանություն | 1. Անտառների ֆիտոսանիտարական վիճակի ուսումնասիրություն և անտառին հասցված վնասի գնահատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամկետ | Անտառների ուսումնասիրված ֆիտոսանիտարական վիճակ |
| | | 2. Անտառների պաշտպանության ինտեգրված (կենսաբանական և այլն) եղանակների կիրառում, անտառների ավիացիոն և վերգետնյա պայքարի իրականացում (կանխարգելիչ գործողություններ, տարեկան մոտ 10 000 հա) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ - երկարաժամկետ | Անտառների բարելավված ֆիտոսանիտարական վիճակ |
| | | 3. Անտառպաշտպանական համակարգի նյութատեխնիկական բազայի բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | կարճաժամկետ | Անտառպաշտպանական համակարգի բարելավված նյութատեխնիկական բազա, անտառների արդյունավետ պաշտպանություն |
| 7. | Անտառվերա-կանգնում, անտառապատում, ագրոանտառա-բուծություն | 1. ՀՀ օպտիմալ անտառապատվածության, անտառվերականգնման, անտառապատման և ագրոանտառաբուծության ծրագրերի մշակում և իրականացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) ՀՀ կրթության և գիտության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամկետ | Անտառվերականգնման, անտառապատման և ագրոանտառաբուծության մշակված ծրագրեր |
| | | 2. Անտառսերմնային և տնկարանային տնտեսությունների (Մարտունի՝ 46 հա, Ստեփանավան՝ 17 հա, Նոյեմբերյան՝ 21 հա, Հրազդան՝ 21 հա, Գորիս՝ 5 | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամ | Որակյալ անտառային տնկանյութի տեսականու ապահովում՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հա, Գուգարք՝ 12 հա, Երևան՝ 10 հա, տնկարաններ) վերակառուցում, փակ և բաց գրունտում տնկանյութի աճեցման նոր (փակ արմատային համակարգով) տեխնոլոգիաների ներդրում | բնապահպանության նախարարություն հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կետ | անտառվերականգնման և անտառապատման միջոցառումների իրականացման համար, դեգրադացված անտառային տարածքների կրճատում |
| | | 3. Ծառահատված և դեգրադացված անտառների վերականգնում և նոր տարածքների անտառապատում (տարեկան շուրջ 5 000 հա) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամկետ | Վերականգնված անտառներ, անտառապատված տարածքներ |
| | | 4. Անտառային ֆոնդի հողերից դուրս գտնվող հողերում անտառապատման ծրագրերի իրականացման խթանում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամկետ | Համայնքային և մասնավոր անտառների հիմնադրում |
| | | 5. Պաշտպանական ագրոանտառբուծության զարգացում, պաշտպանական անտառաշերտերի հիմնադրում (տարեկան 1000 հա, ընդհանուր 10000 հա) | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամկետ | Հողապաշտպան և դաշտապաշտպան անտառաշերտերի առկայություն, գյուղատնտեսական հողերի բերրիության բարձրացում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախարարություն տեղական ինքնակա-ռավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | | |
| | | 6. Վերականգնվող և հիմնադրվելիք անտառտարածքների մթնոլորտից ածխածնի կլանման կարողությունների գնահատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), ՀՀ կրթության և գիտության նախարարություն | կարճաժամկետ-միջնաժամկետ-երկարաժամկետ | Ածխածնի կլանման առումով գնահատված անտառներ |
| 8. | Անտառօգտա-գործում | 1. Նորագույն, անվտանգ և արդյունավետ անտառային մեքենասարքավորումների և տեխնոլոգիաների ներդրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակա-ռավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-երկարաժամկետ | Արդյունավետ անտառօգտագործում, բնապահպանական նորմերի ապահովում |
| | | 2. Անտառները հավատարմագրային կառավարման հանձնելու համակարգի զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ-երկարաժամկետ | Կատարելագործված անտառկառավարման համակարգ |
| | | 3. Օրինական | ՀՀ | կարճաժամկ | Ստվերային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | անտառօգտագործումը խթանող և ապօրինի օգտագործմանը խոչընդոտող տնտեսական մեխանիզմների ներդրում՝ անտառօգտագործման հետ կապված գործունեության որոշ տեսակների լիցենզավորում | գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակա-ռավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | ետ-երկարաժամկետ | անտառօգտագործման նվազեցում, Փայտանյութի օրինական օգտագործման և պետական բյուջեի մուտքերի ավելացում, անտառների վիճակի բարելավում |
| | | 4. Համայնքների կողմից փայտանյութի օրինական օգտագործմանը խթանող մեխանիզմների ներդրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակա-ռավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | կարճաժամկետ | |
| | | 5. Նպաստել ընդհանուր անտառմթերվող ծավալներում շինափայտի ելքի բարձրացմանը և ռացիոնալ օգտագործմանը | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառա-վարման մարմիններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | Բնափայտի կորստի նվազում, արդյունավետ օգտագործում |
| | | 6. Բնափայտի վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների | ՀՀ գյուղատնտեսությ | կարճաժամկետ- | Բնափայտի վերամշակման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ներդրում փայտամշակման ոլորտում | ան նախարարություն տեղական ինքնակառա-վարման մարմիններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | միջնաժամկետ | արդյունավետության բարձրացում, բնափայտի կորստի նվազում |
| | | 7. Անտառային լեռնային ճանապարհների պլանավորման և նախագծման հիմունքների բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | կարճաժամկետ | Բարելավված անտառային ճանապարհներ |
| | | 8. Գործող և նախագծվող անտառային ճանապարհների ցանցի օպտիմալացում, վերանորոգում և կառուցում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառա-վարման մարմիններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | Դժվարամատչելի անտառային տարածքների հասանելիություն, դրանց արդյունավետ օգտագործում |
| | | 9. Անտառօգտագործման բնագավառում մասնավոր սեկտորի ընդգրկման համար երկարաժամկետ և կանխատեսելի պայմանների ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն տեղական ինքնակառա-վարման մարմիններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | Կանխատեսելի անտառօգտագործում, անտառային ոլորտում մասնավոր սեկտորի զարգացում |
| | | 10. Գիտականորեն հիմնավորել տարեկան թույլատրելի հատատեղային ֆոնդի չափաքանակները՝ ըստ ծառատեսակների և | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ | կարճաժամկետ-երկարաժամկետ | Փայտանյութի մթերման օրինական ծավալների ավելացում հիմնված անտառկառավարմա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | անտառհատման տեսակների | բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | ն պլանների վրա, անտառների արդյունավետ վերարտադրություն |
| | | 11. Աջակցել անտառօգտագործման ընդհանուր ծավալներում ոչ բնափայտային անտառային արտադրանքի մթերման աճին.<br>ա) անտառային կողմնարդյունքի արդյունավետ օգտագործման ծավալների ավելացում,<br>բ) էկոտուրիզմի և ռեկրեացիայի զարգացում,<br>գ) որսոնտեսության զարգացում, | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-երկարաժամկետ | Ոչ բնափայտային անտառային արտադրանքի ավելացում, բնափայտի մթերման ծավալների նվազեցում, բնակչության սոցիալական վիճակի բարելավում |
| | | 12. Համայնքային կամ միջհամայնքային անտառօգտագործողների միավորումների/ընկերությունների ստեղծման խրախուսում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | Անտառօգտագործման բնագավառում համայնքների ներգրավվածության և շահագրգռվածության բարձրացում |
| 9. | Անտառի վկայագրում | 1. Ազգային ստանդարտի մշակման և վկայագրման գործընթացն իրականացնելու համար ծրագրային առաջարկի մշակում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | կարճաժամկետ | Վկայագրված անտառներ և անտառանյութ, բարելավված անտառկառավարում և շուկայավարում, ապօրինի գործողությունների նվազեցում, անտառի վիճակի բարելավում |
| | | 2. Ազգային անտառվկայագրման ստանդարտի մշակում | | կարճաժամկետ-երկարաժամկետ | |
| | | 3. Անտառի վկայագրման փորձնական ծրագրերի իրականացում | | կարճաժամկետ-միջնաժամկե | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ առևտրի և տնտեսա`կան զարգացման նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | տ | |
| | | 4. Ազգային անտառվկայագրման համակարգի ներդրում | | միջնաժամկետ | |
| | | 5. Բնափայտի առանձին տեսակների սերտիֆիկացման համակարգի ներդրում | | միջնաժամկետ | |
| | | 6. Արտադրական նշանակության անտառների վկայագրում: Պետական, համայնքային և մասնավոր անտառների վկայագրման գործընթացի խթանում | | միջնաժամկետ երկարաժամկետ | |
| | | 7. Անտառվկայագրման գործընթացների և վկայագրված անտառային արտադրանքների վերաբերյալ հասարակության իրազեկության ապահովում | | կարճաժամկետ-երկարաժամկետ | |
| | | 8. Վկայագրված անտառային արտադրանքների արտահանման ծավալների ավելացում | | | |
| 10. | Ֆինանսա-տնտեսական ոլորտ | 1. Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքները խթանող ֆինանսական նոր մեխանիզմների (հարկային և այլն) կիրառում, համայնքների և մասնավոր սեկտորի ներգրավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | Վերականգնված և անտառապատված տարածքներ, համայնքների և մասնավոր սեկտորի ներգրավվածություն |
| | | 2. Հատատեղերի անտառվերականգնումը խթանող տնտեսական մեխանիզմների կիրառում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ | կարճաժամկետ | Վերականգնված հատատեղեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | | |
| | | 3. Ժամանակակից հաշվապահական հաշվառման համակարգի ներդրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Անտառային սեկտորի հաշվապահական հաշվառման թափանցիկ և արդյունավետ համակարգ |
| | | 4. Անտառտնտեսական և անտառվերականգնման աշխատանքների միավոր արժեքի և ընդհանուր ծախսերի օպտիմալացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Անտառտնտեսական և անտառվերականգնման աշխատանքների արդյունավետ ֆինանսավորում և ծախսերի օպտիմալացում |
| | | 5. Անտառային պաշարների բնօգտագործման վճարների դրույքաչափերի օպտիմալացում, դրանց հաշվարկման և վճարման մեխանիզմների կատարելագործում, այդ թվում՝ համայնքների շահագրգռվածության մեծացման նպատակով | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ | Պետական բյուջեի մուտքերի ավելացում, դրանց նպատակային վերաբաշխում, համայնքների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավվածության ավելացում |
| | | 6. Փայտանյութի վաճառքի աճուրդային եղանակի ներդրում<br>7. Բնափայտի մթերման և վաճառքի թափանցիկ, մրցակցային դաշտի ձևավորում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ | Անտառային սեկտորում շուկայական հարաբերությունների և թափանցիկ մրցակցային դաշտի առկայություն |
| | | 8. Ապօրինի անտառօգտագործողներին հարկման օրինական դաշտ բերելու մեխանիզմների ներդրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական | կարճաժամկետ-միջնաժամկետ | Ապօրինի անտառօգտագործման նվազեցում, պետական բյուջեի մուտքերի ավելացում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | | |
| | | 9. Փայտանյութի ներքին և արտաքին շուկաների ուսումնասիրություն և առևտրայնացման զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | Շուկայավարման կատարելագործում, եկամուտների ավելացում, ներքին շուկայի զարգացում |
| | | 10. Անմշակ բնափայտի արտահանմանը խոչընդոտող և անտառանյութի ներմուծմանը խրախուսող մեխանիզմների (մաքսային, հարկային և այլն) ներդրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | կարճաժամկետ | Անմշակ բնափայտի արտահանման կանխարգելում, փայտամշակման արտադրանքի ծավալների մեծացում |
| | | 11. Անտառային ոլորտում միջազգային ֆինանսավորման մեխանիզմների առավել արդյունավետ օգտագործում.<br>ա) Կիոտոյի արձանագրությամբ նախատեսված ֆինանսավորման մեխանիզմներ (մաքուր զարգացման մեխանիզմ և այլն)<br>բ) «Երկրի արտաքին պարտք - բնություն» հաշվանցման մեխանիզմի կիրառում<br>գ) սփյուռքի հնարավորությունների արդյունավետ օգտագործման խթանում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ-երկարաժամկետ | Անտառվերականգնման, անտառապատման և այլ ոլորտներում միջազգային ներդրումների ավելացում, անտառային սեկտորի զարգացում, անտառների արտադրողականության բարձրացում և անտառապատվածության ընդլայնում |
| | | 12. Անտառի` որպես անշարժ գույքի ապահովագրության համակարգի ներդրում` հրդեհներից, այլ տարերային աղետներից և անտառխախտումներից պաշտպանելու համար | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ-երկարաժամկետ | Անտառների սեփականատերերի պաշտպանվածություն, վնասված անտառների վերականգնման երաշխիք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 13. Ոչ շահութաբեր, բայց անհետաձգելի անտառտնտեսական միջոցառումների իրականացման համար (խնամքի հատումներ, անտառվերականգնում և անտառապատում և այլն) օրենսդրությամբ սահմանված կարգով պետական բյուջեից սուբսիդիաների ավելացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | կարճաժամկետ-երկարաժամկետ | Արդյունավետ անտառկառավարում |
| 11. | Անտառի բնապահ-պանական հարցեր | **1. Անտառային կենսաբազմազանություն** | | | |
| | | 1. Անտառային կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ստեղծման համար չափորոշիչների որոշման և մոնիտորինգի ծրագրի մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | կարճաժամկետ | Անտառային կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների հավաքագրում, գնահատում, մոնիտորինգի և տեղեկատվության փոխանակության համակարգի հիմնման համար նախադրյալների ստեղծում |
| | | 2. Անտառային կենսաբազմազանության գույքագրում և հաշվառում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | երկարաժամկետ | Անտառային կենսաբազմազանության պահպանության ներկա վիճակի գնահատում, կրիտիկական վիճակում գտնվող տեսակների բացահայտում, մոնիտորինգի համար տվյալների ապահովում |
| | | 3. Անտառային կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | երկարաժամկետ | Անտառային կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվության հավաքում, համակարգում և փոխանակում՝ պահպանության միջոցառումների արդյունավետությունը ապահովելու համար |
| | | 4. Անտառային կենսաբազմազանության հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության համար էտալոնային | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ | միջնաժամկետ | Առավել արժեքավոր անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | էկոհամակարգերի/ տեղամասերի բացահայտում և քարտեզագրում | գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | ապահովում |
| | | 5. Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա տնտեսական և ռեկրեացիոն գործունեության ազդեցության բացահայտում և դրա մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | երկարաժամկետ | Անտառների օգտակար հատկությունների, մարդուն տրամադրվող բարիքների ու ծառայությունների ուժեղացում |
| | | 6. Դենդրոպարկերի և անտառային պուրակների վերականգնման և զարգացման ծրագրի խթանում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | միջնաժամկետ | Դենդրոպարկերի և անտառային պուրակների վիճակի բարելավման միջոցով տեղական և ներմուծված ծառաթփային բույսերի կենդանի հավաքածուների ex-situ պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովում |
| | | 7. Անտառային կենսաբազմազանության առանձին տեսակների բնակմիջավայրի կորստի կանխարգելմանը և առանցքային կենսատոպերի պահպանությանն ուղղված ծրագրերի իրականացում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | երկարաժամկետ | Առավել արժեքավոր անտառային էկոհամակարգերի և կենսատոպերի առանձնացում և պահպանության ապահովում |
| | | **2. Կլիմայի փոփոխություն** | | | |
| | | 1. Մաքուր զարգացման մեխանիզմների շրջանակում անտառապատման/անտառ-վերականգնման աշխատանքների իրականացման խթանում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության | երկարաժամկետ | Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալների ընդլայնում, միջազգային ֆինանսավորման աղբյուրների ներգրավում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախարարություն<br>տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ),<br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ),<br>մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | | |
| | | 2. Ջերմոցային գազերի կլանում/արտանետում, կադաստրի վարման առաջարկների նախապատրաստում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | միջնաժամկետ | Միջազգային ֆինանսավորման աղբյուրների ներգրավման համար նախադրյալների ստեղծում |
| | | 3. Անտառային ոլորտից ջերմոցային գազերի կադաստրի գնահատման որակի բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | երկարաժամկետ | |
| | | 4. Կլիմայի փոփոխության արդյունքում կանխատեսվող անտառի խոցելիության գնահատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>հասարակական կազմակերպություններ | միջնաժամկետ-երկարաժամկետ | Անտառների վիճակի բարելավմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների իրականացում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | (համաձայնությամբ) | | |
| | | 5. Անտառների հարմարվողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | միջնաժամկետ-երկարաժամկետ | |
| | | 6. Հայաստանի օպտիմալ անտառապատվածությանը հասնելու նպատակով ինտեգրացված հողօգտագործման պլանավորման մոտեցումների զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | միջնաժամկետ-երկարաժամկետ | Հայաստանի օպտիմալ անտառապատվածություն |
| | | **3. Հողի և ջրի փոփոխություն** | | | |
| | | 1. Հակաէրոզիոն ու հողապաշտպան անտառապատման ծրագրերի մշակում և իրականացում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն | միջնաժամկետ-երկարաժամկետ | Անապատացման և անտառային հողերի դեգրադացիայի կանխում, արդյունավետ կառավարվող ջրհավաք ավազաններ |
| | | 2. Խթանել ջրհավաք ավազանների կառավարման ծրագրերում անտառային բաղադրիչի ինտեգրումը | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), | միջնաժամկետ-երկարաժամկետ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | | |
| | | 3. Իրականացնել հողերի կայուն կառավարման և ինտեգրված հողօգտագործման պլանավորում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | |
| 12. | Անտառի սոցիալական ասպեկտները | 1. Անտառամերձ համայնքներին մոտ մթերման կետերի ստեղծում՝ ստացվող ոչ բնափայտային անտառային արդյունքի համար | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | միջնաժամկետ | Անտառամերձ համայնքների բնակչության համար աշխատատեղերի ստեղծում, արտադրվող արտադրանքի սպառում, չքավորության կրճատում, անտառի վրա անտրոպոգեն ճնշման նվազում |
| | | 2. Տեղերում գյուղատնտեսական մթերքների և ոչ բնափայտային անտառային արդյունքի վերամշակման փոքր և միջին արտադրությունների ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), | միջնաժամկետ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ), մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | | |
| | | 3. Հանգստի և կայուն զբոսաշրջության, մասնավորապես էկոտուրիզմի բազայի ստեղծում | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | միջնաժամկետ-երկարաժամկետ | |
| | | 4. Համայնքներին էներգակիրներով ապահովման աջակցություն | ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | միջնաժամկետ | |
| | | ա) անտառամերձ բնակավայրերի առաջնահերթ գազիֆիկացում, գազի համար կանխավճարի, էլեկտրաէներգիայի և վառելիքի գների մատչելիության խնդրի լուծում | | | |
| | | բ) այլընտրանքային էներգիայի աղբյուրների զարգացում (վերականգնվող էներգիայի աղբյուրներ՝ փոքր հիդրոէներգետիկա, կենսագազ, արևային էներգետիկա, | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հողմաէներգետիկա և այլն) | | | |
| | | գ) թափուկի իրացման մեխանիզմի կատարելագործում, իրացման գների կարգավորում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ-միջնաժամկետ | |
| | | 5. Աջակցություն մեղվաբուծությանը | | միջնաժամկետ | |
| | | 6. Ոչ բնափայտային անտառային արդյունքի օգտագործման համար գնագոյացման համակարգի վերանայում՝ զգալի կրճատելով ոչ բնափայտային անտառային արդյունքի բնավճարները | | միջնաժամկետ | |
| | | 7. Խոտհարքների և արոտավայրերի արդյունավետ օգտագործման խթանում | | միջնաժամկետ | |
| | | 8. Համայնքային անտառների զարգացման խթանում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | միջնաժամկետ | |
| | | 9. Համայնքամերձ պետական անտառները համայնքի կառավարմանը տրամադրելու մեխանիզմների խթանում (տեխնիկական օժանդակություն, տնկարանների հիմնադրում և այլն) համայնքային անտառկառավարման ծրագրեր՝ աղքատության մակարդակի կրճատման նպատակով | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն պետական կառավարման մարմիններ | միջնաժամկետ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | | |
| 13. | Անտառային գիտություն | 1. Անտառային գիտության ռազմավարական զարգացման ուղղությունների ուսումնասիրում և դրանց իրականացման համալիր ծրագրերի մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | կարճաժամկետ, միջնաժամկետ-երկարաժամկետ | Կայուն անտառկառավարման գիտական հիմունքների ստեղծում, ուսումնասիրված անտառային տարածքներ, հետագա արդյունավետ կառավարմանը նպաստող մշակված առաջարկներ |
| | | 2. Հանրապետությունում մոդելային անտառային ցանցի ստեղծման՝ անտառտնտեսվարման նոր մեթոդների, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման խթանում | | | |
| | | 3. Անտառային գիտահետազոտական կազմակերպություններում նյութատեխնիկական հագեցվածության բարելավում | | | |
| | | 4. Անտառկազմող հիմնական ծառատեսակների բնական վերարտադրության, դրանց աճի ու պտղաբերության բարձրացմանն ուղղված հետազոտությունների իրականացում | | | |
| | | 5. Անտառային դենդրաբազմազանության, հազվագյուտ և վտանգված ծառատեսակների ուսումնասիրում | | | |
| | | 6. Անտառների արտադրողականության բարձրացման ուղիների մշակում | | | |
| | | 7. Անտառային էկոհամակարգերի ամբողջական կառուցվածքի, դրանց փոխկապակցվածության և սուկցեսիոն փոփոխությունների բացահայտում ու գնահատում | | | |
| | | 8. Դեգրադացված անտառային տարածքների վերականգնման համար գիտական հիմունքների մշակում | | | |
| | | 9. Անտառային էկոհամակարգերի | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վրա կլիմայի փոփոխության ազդեցության ուսումնասիրում | | | |
| | | 10. Անտառային էկոհամակարգերում ածխածնի կուտակման հնարավորությունների գնահատում | | | |
| | | 11. Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի անտառագիտության ամբիոնի (ստեղծվել է 2003 թ-ին) լաբորատորիաների հիմնում և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի անտառագիտություն մասնագիտության զարգացում | | | |
| | | 12. Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գիտամանկավարժական կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի ստեղծում | | | |
| | | 13. Զիկատարում անտառի նպատակային և կայուն օգտագործման ուսուցողական կենտրոնի ստեղծում, գործնական կրթության և ուսուցման բազայի հիմնում | | | |
| 14. | Կրթություն և ուսուցում | 1. Մայրենի լեզվով դասագրքերի և ուսումնամեթոդական հենքի ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | կարճաժամկետ, միջնաժամկետ-երկարաժամկետ | Մարդկային ռեսուրսների զարգացում, կադրերի պատրաստում և վերապատրաստում, կառավարման համակարգի մասնագետներով համալրում |
| | | 2. Անտառային բարձրագույն կրթության համար ըստ մարզերի նպատակային տեղերի հատկացում | | | |
| | | 3. Պետական պատվերով շրջանավարտներին անտառային ոլորտում մասնագիտական աշխատանքով ապահովման մեխանիզմների կիրառում | | | |
| | | 4. Միջազգային համապա-տասխան կրթական հաստատությունների հետ համա-գործակցության զարգացում | | | |
| | | 5. Միջնակարգ անտառագիտական կրթության համակարգի հիմնում | | | |
| | | 6. Տարբեր որակավորման և կարգավիճակի անձնակազմի համար ուսուցման համապատասխան ծրագրերի մշակում և տարբեր ուսուցողական միջոցառումների իրականացում | | | |
| | | 7. Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի և «Զիկատար»-ի ուսուցողական կենտրոնների հենքի վրա գործնական դասընթացների իրականացում՝ տարբեր տեսակի անտառային միջոցառումներ իրականացնող տեխնիկական աշխատակազմի համար, ինչպես նաև հավատարմագրային կառավարման, երկրորդական | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | անտառանյութի, անտառային կողմնարդյունքի, ռեկրեացիայի, շուկայավարման և այլ հարցերին առնչվող դասընթացներ | | | |
| 15. | Իրազեկում | 1. Տվյալների կենտրոնացված բազա՝ անտառկառավարման պլանների, անտառի աճի և աճի ընթացքի մոդելների, հատումների և կենսաբազմազանության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության պահպանման համար | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>պետական կառավարման մարմիններ<br>տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)<br>հասարակական կազմակերպու՝թյուններ (համաձայնությամբ)<br>մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ, միջնաժամկետ-երկարաժամկետ | Հասարակության իրազեկության բարձրացում, որոշումների կայացման մասնակցային գործընթացի և կառավարման համակարգի թափանցիկության ապահովում |
| | | 2. Տվյալների բազայի մատչելիություն ինտերնետում | | | |
| | | 3. Զանգվածային լրատվամիջոցների արդյունավետ օգտագործում | | | |
| | | 4. Գիտահանրամատչելի նյութերի հրատարակություն | | | |
| | | 5. Միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում, անտառգիտասփյուռի ձևավորում | | | |
| | | 6. Բնակչության էկոլոգիական իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ | | | |
| | | ա) համայնքների համար բնապահպանական և բնօգտագործման դասընթացների կազմակերպում՝ հատուկ կարևորելով կայուն անտառօգտագործման անհրաժեշտությունը և նշանակությունը տեղի համայնքի բարեկեցության համար | | | |
| | | բ) աջակցություն էկոլոգիական կրթության զարգացմանը բոլոր մակարդակներում | | | |
| | | գ) տեղեկատվության հրապարակայնություն և մատչելիություն | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. | Միջազգային համագործակ-ցություն | 1. Զարգացնել միջազգային անտառային ծրագրերի մշակումը հետևյալ ուղղություններով. | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>պետական կառավարման մարմիններ<br>տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)<br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ, միջնաժամկետ-երկարաժամկետ | Միջազգային փորձի, առաջավոր տեխնոլոգիաների, ֆինանսական միջոցների, ոլորտի զարգացման ապահովման խթանում, շրջակա միջավայրի բարելավում, անտառային տարածքների ընդլայնում |
| | | ա) միջազգային համագործակցության, անտառային ծրագրերի մշակման և ֆինանսական աղբյուրների ներգրավման նպատակով աշխատանքային խմբի ստեղծում | | | |
| | | բ) անտառապատման/անտառ՟վերականգնման ծրագրերի իրականացում անտառային էկոհամակարգերի ածխածնի կլանման ունակության շնորհիվ կիրառելով Մաքուր զարգացման մեխանիզմներ | | | |
| | | գ) միջազգային մոդելային անտառային ծրագրերի իրականացում | | | |
| | | 2. Միջազգային և գլոբալ նշանակության անտառային գիտական թեմաների համատեղ ուսումնասիրություններ | | | |
| | | 3. Նպաստել անտառային ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրմանը և փորձի փոխանակմանը | | | |
| | | 4. Անտառային ոլորտի ինտեգրումը միջազգային գործընթացներին | | | |
| | | 5. Անտառի ազգային ծրագրի առաջնահերթությունների իրականացման առաջարկների մշակում և իրականացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)<br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)<br>մասնավոր սեկտոր (համաձայնությամբ) | կարճաժամկետ | ԱԱԾ առաջնահերթ գործողությունների իրականացում |

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

**Հավելված N 3**
**ՀՀ կառավարության 2005 թվականի**
**հուլիսի 21-ի N 1232-Ն որոշման**

ՑԱՆԿ

ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ

| | |
|---|---|
| 1. | Անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգ |
| 2. | Անտառային պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման և տվյալների տրամադրման կարգ |
| 3. | Անտառային մոնիտորինգի իրականացման կարգ |
| 4. | Անտառային հողերի կատեգորիայի փոփոխման կարգ |
| 5. | Ըստ հիմնական նպատակային նշանակության անտառների դասակարգման կարգ |
| 6. | Անտառային հողերի հակահրդեհային պահպանության կարգ |
| 7. | Անտառների հիվանդություններից և վնասատուներից պաշտպանության կարգ |
| 8. | Անտառների բնական վերականգնմանն աջակցության կարգ |
| 9. | Անտառվերականգնման և անտառապատման կարգ |
| 10. | Անտառմշակույթների և բնական վերաճին օժանդակման եղանակով վերականգնված օբյեկտների և տնկարանների տեխնդունման և գույքագրման կարգեր |
| 11. | Անտառմշակույթների և բնական վերաճին օժանդակման եղանակով վերականգնված օբյեկտների՝ անտառի շարք փոխադրելու կարգ |
| 12. | Անտառային սերմերի որակավորման կարգ |
| 13. | Խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգ |
| 14. | Գլխավոր (անտառվերականգնման) հատումների իրականացման կարգ |
| 15. | Հատման տարիքի սահմանման կարգ |
| 16. | Այլ հատումների իրականացման կարգ |
| 17. | Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգ |
| 18. | Արմատի վրա անտառանյութի բացթողնման կարգ |
| 19. | Անտառային հողերի և անտառին պատճառված վնասի հաշվառման կարգ |
| 20. | Պետական պահպանության ծառայության գործունեության կարգ |
| 21. | Պետական անտառների անտառօգտագործման կարգ |
| 22. | Գիտահետազոտական և կրթական նպատակներով անտառային հողերից օգտվելու կարգ |
| 23. | Մշակութային, առողջարարական, սպորտի և զբոսաշրջության նպատակներով անտառներից և անտառային հողերից օգտվելու կարգ |
| 24. | Անտառի կողմնակի օգտագործման կարգ |
| 25. | Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակներով պաշտպանական, արտադրական և հատուկ նշանակության պետական և համայնքային անտառներում անտառային հողերից օգտվելու կարգ |
| 26. | Անտառային հողերում անտառային տնտեսության և անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքները, օգտակար հանածոների արդյունահանումը, մալուխների, խողովակաշարերի և այլ կոմունիկացիաների անցկացման, հորատման և այլ աշխատանքների իրականացման կարգ |
| 27. | Պետական անտառների հավատարմագրային կառավարման անցկացման կարգ |
| 28. | Անտառային տնտեսության համայնքային կառավարման կարգ |
| 29. | Անտառային հողերի և անտառների վարձակալության տրամադրելու կարգ |
| 30. | Անտառօգտագործման լիցենզավորման կարգ |
| 31. | Ցածրարժեք ծառատեսակների տնկարկների վերակառուցման կարգ |
| 32. | Անտառտնտեսական աշխատանքներում կենսաբազմազանության պահպանության կարգ |

| | |
|---|---|
| 33. | Ոչ բնափայտային անտառային պաշարների հաշվառման և մոնիտորինգի իրականացման կարգ |
| 34. | Բնափայտի մթերման տարեկան նորմայի (հաշվարկային հատատեղ) հաշվարկման կարգ |

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**